ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հուլիսի 2017 թվականի N 143-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի ԹԻՎ 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2014 թվականի ապրիլի 22-ի «Ջրվեժ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպումն ու անցկացումը կանոնակարգելու մասին» թիվ 76-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման առաջին կետում «Պապանյան Մարտին» բառերը փոխարինել «Պապանյան Մարինե» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հուլիսի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հուլիսի 2017 թվականի N 144-Ա

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշման 4-րդ և 5-րդ կետերի պահանջով, ***որոշում եմ.***

1.Զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային պայմանները ուսումնասիրելու և ստուգելու նպատակով ստեղծել բնակարանային հարցերի հանձնաժողով հետևյալ կազմով՝

Թադևոսյան Սուսաննա - աշխատակազմի քարտուղար (նախագահ),

Մարգարյան Անահիտ - ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ,

Մարգարյան Արամազդ - աշխատակազմի առաջատար մասնագետ,

Թադևոսյան Մարգարիտա - աշխատակազմի առաջին կարգի մասնագետ,

Վարդանյան Վահագն - համայնքի ավագանու անդամ,

Մելքումյան Գայանե - համայնքի ավագանու անդամ:

2. Հանձնարարել հանձնաժողովին՝ կազմելու և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնելու բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների ցուցակները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հուլիսի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20 հուլիսի 2017 թվականի N 145-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 56-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից 2017 թվականի օգոստոսի 24-ին կազմակերպել աճուրդային վաճառք՝ համաձայն հավելվածով հաստատված ելակետային տվյալների, մեկնարկային գների:

2. Հանձնարարել Ջրվեժ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպող և անցկացնող հանձնաժողովին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված աճուրդով օտարման ենթակա հողամասերի հրապարակային ծանուցման հրապարակումը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և սահմանված կարգով ապահովել աճուրդի անցկացումն ու արդյունքների ամփոփումը:

3. Աճուրդի վարման համար աճուրդավար նշանակել աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ Արտակ Վարդանյանին:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հուլիսի 20
գ. Ջրվեժ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2017 թվականի
հուլիսի 20-ի N 145-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑՈՒՑԱԿ

հ/հ	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը	Մակերեսը քառ.մ	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ սերվիտուտների) առկայությունը	Ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները	Մեկնարկային գինը (դրամ)
1	13 փողոց, թիվ 60/1 0361-0028	1905.9	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	8576550
2	13 փողոց, 1 փակ. թիվ 5 0361-0024	1430.5	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	6437250
3	13 փողոց, 1 փակ. թիվ 7 0361-0026	1556.9	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	7006050
4	13 փողոց, 1 փակ. թիվ 9 0361-0027	1281.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	5764500
5	13 փողոց, 1 փակ. թիվ 28 0361-0023	1939.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	8725500
6	34 փողոց, թիվ 14 962-001	735.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	3307500
7	34 փողոց, թիվ 16 962-002	739.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	3325500
8	35 փողոց, թիվ 6 961-008	1000.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	4500000
9	35 փողոց, թիվ 8 961-007	946.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	4257000
10	36 փողոց, թիվ 6 936-014	1000.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	4500000
11	36 փողոց, թիվ 13 961-017	1000.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	4500000
12	36 փողոց, թիվ 15 961-018	996.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	4482000
13	36 փողոց, թիվ 33 958-012	1000.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	4500000
14	40 փողոց, թիվ 5 0115-0035	552.7	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	2487150
15	40 փողոց, թիվ 42 960-002	863.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	3883500
16	43 փողոց, թիվ 3 0116-0037	412.4	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	1855800
17	45 փողոց, թիվ 13/1 121-025	679.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	3055500
18	56 փողոց, թիվ 2 958-016	1050.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	4725000
19	56 փողոց, թիվ 4 958-015	920.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	4140000
20	56 փողոց, թիվ 6 958-014	814.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	3663000
21	56 փողոց, թիվ 8 958-013	798.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	3591000
22	56 փողոց, թիվ 11 939-013	1200.0	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	չկա	5400000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հուլիսի 2017 թվականի N 146-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Սիրանուշ Վլադիմիրի Շիրինյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 2-րդ փողոցի թիվ 9 հասցեի տնամերձ հողակտորում բնակելի տան վերակառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հուլիսի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հուլիսի 2017 թվականի N 147-Ա

ՀԵՂԻՆԵ ԿԱՐԱՊԵՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշման 5-րդ և 6-րդ կետերի պահանջով, հիմք ընդունելով համայնքի բնակարանային հարցերի հանձնաժողովի կազմած եզրակացությունը Ջրվեժի 1-ին փողոցի թիվ 8 տան բնակիչ Հեղինե Կարապետի Խաչատրյանի ընտանիքի բնակարանային պայմանների վերաբերյալ, ***որոշում եմ.***

1. Բավարարել 2017 թվականի ապրիլի 26-ին ծառայողական պարտականությունները կատարելիս մահացած մայոր Արմեն Գևորգի Ծատուրյանի այրու՝ Հեղինե Կարապետի Խաչատրյանի խնդրանքը և նրա ընտանիքը ընդգրկել համայնքի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների ցուցակում:

2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանին՝ համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան՝ վերջնական ամփոփման և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կարիքավոր ընտանիքներին աջակցություն տրամադրող հանձնաժողովի քննարկմանը ուղարկելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հուլիսի 27
գ. Ջրվեժ